Խնդիր. Խ-ն թշնամական հարաբերությունների մեջ գտնվելով Ֆ-ի հետ, փողոցի բանուկ հատվածում խիտ երթևեկության պայմաններում, ապօրինի կրած ակոսափող ինքնաձիգից 20 մենահատ կրակոց է արձակել վերջինիս զրահապատ ավտոմեքենայի վրա: Արձակված կրակոցներից 3-ը դիպչել են մեքենայի դիմապակուն և շարժիչի ծածկոցին: Չնայած շրջակայքում եղել են այլ մեքենաներ և մարդիկ, սակայն որևէ այլ վնաս չի պատճառվել: Խ-ն նախաքննության ընթացքում հայտնել է, որ այդ կերպ ցանկացել է վախեցնել Ֆ-ին, քանի որ գիտակցել է, որ մեքենան զրահապատ է: Ինչպես պետք է որակել Խ-ի արարք(ներ)ը.
ա) սպանության սպառնալիքը,
բ) շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության սպառնալիքը և ապօրինի հրազեն կրելը՝ հանցանքների համակցությամբ,
գ) սպանության փորձ և ապօրինի հրազեն կրելը՝ հանցանքների համակցությամբ
դ) շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձ և ապօրինի հրազեն կրելը՝ հանցանքների համակցությամբ:

Խնդիր. Առաջին ատյանի դատարանի կողմից վերջնական դատական ակտ կայացնելուց հետո իրավասու է արդյոք մեղադրողը խստացման առումով փոփոխել մեղադրանքը.
ա) ոչ,
բ) ոչ, քանի որ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելուց հետո մեղադրողը խստացման առումով մեղադրանքը փոփոխելու իրավասության չունի,
գ) այո՝ միայն վերաքննիչ քրեական դատարանում,
դ) այո՝ միայն վերադաս դատական ատյանի կողմից առաջին ատյանի վերջնական դատական ակտը բեկանելուց և գործն առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու դեպքում: